Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ Հրավիրող), ովքեր մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ (այսուհետ՝ Արշավի գործողություն)՝ «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակներում MyAmeria հավելվածից «Հրավիրիր Ընկերոջդ» ֆունկցիոնալի միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ Հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ և պատվիրել Mastercard Standard տեսակի քարտ, Արշավի գործողության ավարտից հետո՝ մինչև 2026թ. հունվարի 15-ը ներառյալ իրենց բանկային հաշվին կստանան խրախուսման վճար 5000 /առանց հարկերի/ ՀՀ դրամի չափով:

Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.

- Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի Mastercard Standard հեռավար եղանակով՝ հրավերի արդյունքում ստացված SMS հաղորդագրության հղմամբ գրանցվելով,
- Հրավիրողը պետք է հրավերը ուղարկած լինի առավելագույնը մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ,
- Հրավիրվողը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ 2025թ. դեկտեմբերի 12-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ,
- Արշավի ամփոփման պահին՝ հունվարի 15-ի դրությամբ, Հրավիրողը և Հրավիրվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Հրավիրվողը չպետք է լինի 2025թ. հունիսի 1-ից հետո փակված և Արշավի շրջանակներում վերաբացված հաճախորդ: